ՀՀ պաշտպանության
նախարարության
«Վազգեն Սարգսյանի անվան
ռազմական ակադեմիա»
պետական հիմնարկ

ՀՀ ԳԱԱ
արևելագիտության ինստիտուտ
ՊՈԱԿ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

ՀՀ պաշտպանության նախարարության «Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ակադեմիա» պետական հիմնարկի և ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ ՊՈԱԿ-ի միջև

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտը, ի դեմս ինստիտուտի տնօրենի ԺՊ Լիլիթ Հարությունյանի, ով գործում է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ «ԱԻ»)՝ մի կողմից, և ՀՀ պաշտպանության նախարարության «Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ակադեմիա» պետական հիմնարկը (այսուհետ՝ Ռազմական ակադեմիա)՝ ի դեմս ակադեմիայի պետ, գնդապետ Արսեն Մանգասարյանի, ով գործում է ՀՀ պաշտպանության նախարարության «Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ակադեմիա» պետական հիմնարկի կանոնադրության հիման վրա՝ մյուս կողմից, կնքեցին սույն համագործակցության հուշագիրը հետևյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1.
ՀՈՒՇԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.1. Սույն Հուշագրի նպատակն է՝ զարգացնել համագործակցությունը կրթության և հետազոտության ոլորտում, տեղեկատվության և մշակութային փոխանակումը և նպաստել երկու կառույցների միջև փոխըմբռնմանը:

1.2. Սույն նպատակը չի խոչընդոտում Կողմերի օրենսդրությամբ չարգելված համագործակցության այլ տեսակների զարգացումը, որոնք կարող են առաջանալ հետագայում:

ՀՈԴՎԱԾ 2.
ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սույն Հուշագրի նպատակին հասնելու համար Կողմերը համաձայնում են համագործակցել միմյանց հետ հետևյալ ոլորտներում.

2.1. մագիստրոսների, ասպիրանտների, հայցորդների, դասախոսների և հետազոտողների ակադեմիական փոխանակում, վերապատրաստում, կարճաժամկետ և երկարաժամկետ ուսումնառություն՝ մասնագիտական (գիտակրթական, հետազոտական) պրակտիկա անցնելու համար,

2.2. փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում բարձր որակավորում ունեցող գիտական կադրերի և մասնագետների պատրաստման համագործակցություն,

2.3. նպաստել գիտական համագործակցության հաստատմանը՝ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում,

2.4. Կողմերի ներկայացուցիչներին հրավիրել դասախոսություններ կարդալու՝ փորձի և տեղեկատվության փոխանակման համար,

2.5. Կողմերի պրոֆեսորադասախոսական կազմի և վարչական անձնակազմի կողմից դասախոսությունների, վարպետության դասերի անցկացում,

2.6. համատեղ գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների անցկացում՝ մագիստրոսական և դոկտորական ատենախոսություններ գրելու, համատեղ ղեկավարելու և գիտական խորհրդատվության համար, ինչպես նաև

գիտական աշխատանքներ կատարելու նպատակով հայցորդների ձևակերպման գործում,

2.7. համատեղ նախագծերի և ծրագրերի իրականացում,

2.8. համատեղ կոնֆերանսների, սեմինարների, սիմպոզիումների, կլոր սեղանների, Կողմերին նվիրված օրերի և այլ նախաձեռնությունների անցկացում,

2.9.համատեղ աշխատանքի արդյունքների հիման վրա հետազոտական, ուսումնական և մեթոդական նյութերի հրապարակում,

2.10.հրապարակումների, գիտական հետազոտությունների, ուսումնական գրականության, պարբերականների, ընթացիկ իրադարձությունների մասին տեղեկատվության փոխանակում և գիտական հրապարակումների գրախոսում,

2.11. Կողմերի աշխատակիցների առաջադեմ մեթոդներով ուսուցում և մասնագիտական վերապատրաստում, եթե դա չի հակասում որևէ Կողմի կանոնադրական խնդիրներին,

2.13. առկա կրթական և հետազոտական ծրագրերի շրջանակներում դրամաշնորհների համար համատեղ հայտերի պատրաստում,

2.14. Կողմերին տեղեկացնել գիտության և կրթության ոլորտում համատեղ կազմակերպվող առաջիկա գիտաժողովների և սեմինարների մասին:

ՀՈԴՎԱԾ 3.
ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

3.1. Սույն ոլորտներում իրականացվող աշխատանքների համար Կողմերը չունեն ֆինանսական պարտավորություններ: Հնարավոր ֆինանսական պարտավորությունները յուրաքանչյուր Կողմ իրականացնում է իր հաշվին,

3.2. Կողմերը հնարավոր են համարում ներգրավել պոտենցիալ ֆինանսական գործընկերներ՝ ներառյալ հիմնադրամները,

3.3. Համագործակցության ընթացքում Կողմերը կարող են օգտագործել պետական ու ռազմական գաղտնիքներ չպարունակող միմյանց գույքը, տեխնիկական և լսարանային հնարավորությունները:

ՀՈԴՎԱԾ 4.
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ

4.1. Հուշագիրը չի կարող փոխվել կամ լրացվել միակողմանիորեն:

4.2. Բոլոր փոփոխություններն ու լրացումները պետք է կատարվեն գրավոր և ստորագրվեն երկկողմ համաձայնությամբ:

4.3. Սույն Հուշագիրը կարող է փոփոխվել և լրացվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ ստորագրելով լրացուցիչ համաձայնագրեր, որոնք կլինեն դրա անբաժանելի մասը, պատշաճ կատարվեն և ստորագրվեն Կողմերի լիազորված անձանց կողմից:

ՀՈԴՎԱԾ 5.
ՀՈՒՇԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

5.1. Սույն Հուշագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման օրվանից և գործում է անորոշ ժամկետով:

5.2. Սույն Հուշագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ՝ ենթադրվող դադարեցման օրվանից ոչ ուշ, քան 1 (մեկ) տարի

առաջ՝ մյուս կողմին գրավոր ծանուցմամբ:

ՀՈԴՎԱԾ 6.
ՀՈՒՇԱԳԻՐԸ ՍՏՈՐԱԳՐՈՂ ԿՈՂՄԵՐԸ

Սույն Հուշագիրը կնքված է հայերենով, հավասար իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

Սույն Հուշագիրը կազմվել է « » _____ 2024թ., Երևան:

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ՎԱՀԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ
ԱՆՎԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ» ՊԵՏԱԿԱՆ
ՀԻՄՆԱՐԿԻ ԿՈՂՄԻՑ

Ակադեմիայի պետ
գնդապետ Ա. Մանգասարյան

_____
ստորագրություն

Կ.Տ

ՀՀ, ք. Երևան, 0090,
Դավիթ Բեկի 156,
Հեռ. (+37410) 662202,
mu.vs@mil.am

ՀՀ ԳԱԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏ
ՊՈԱԿ-Ի ԿՈՂՄԻՑ

Ինստիտուտի տնօրենի ԺՊ
Լ. Հարությունյան

_____
ստորագրություն

Կ.Տ

ՀՀ, ք. Երևան, 0019,
Մ. Բաղրամյան պողոտա
24/4,
Հեռ. (+37410) 583382
info@orient.sci.am